| Հ/հ | Ծառայության արդյունքում մատակարարման ենթակա ապրանքի անվանում | Ձ/Մ | Քանակ | Մեկ միավ. գին/դրամ/ | Ընդհանուր գումար/դրամ/ | Գնման ժամանակացույց ըստ 2015թ. ամիսների բաց ոչ ուշ, քան 20.12.2015թ. | | | | | | | |
|-----|--|-----|--------|---------------------|------------------------|--|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|
| | | | | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր |
| 1 | Կոստյում՝ ձմեռային, դաշտային | Է-4 | 10 000 | 16 500 | 165 000 000 | 2000 | | | | 2000 | 2500 | 2500 | 1000 |

Հավելված N 2
 N ՇՇՁԲ-7/6-1 պայմանագրին կից
 N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

| Հ/հ | Ծառայության արդյունքում մատակարարման ենթակա ապրանքի անվանում | Համաձայնագրի գին/դրամ/ | Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ., ընդ որում՝ | | | | | | | |
|-----|--|------------------------|---|-------|-------|--------|------------|-------------|-------------|-------------|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր |
| 1 | Կոստյում՝ ձմեռային, դաշտային | 165 000 000 | 33 000 000 | | | | 66 000 000 | 107 250 000 | 148 500 000 | 165 000 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են անողական կազմով

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ


ՀՀ պաշտպանության նախարարություն
 ք. Երևան Բազմաշրջանային
 ՀՀ ՖՆ աշխատանքային ֆորմալնական վարչություն
 Հ/Հ 90001144079
 ՀՎՀՀ 0086749
 ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական
 ՆՏԱ դեպարտամենտի պետ



(Signature)
 Ա. ՄԻՈՂԱԲԵԿՅԱՆ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Վանաձորի «Գորրիա» կարի ֆաբրիկա» ՍՊԸ
 ք. Վանաձոր Կարի ֆաբրիկա Խճ. 113/1
 «Էյ-Էս-Քի-Էս» Վանաձորի ֆաբրիկա ՓԲԸ
 Հ/Հ 2170833524001
 ՀՎՀՀ 0684617



(Signature)
 Գ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

« Հաշտպանության նախարարությունը, ի դեմս « Հաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Վանաձորի «Գյորիա» կարի ֆաբրիկա» ՍՊԸ -ի՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Դարբինյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել դերձակի ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի Հավելված N 1-ի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայության արդյունքը և վճարել դրա համար: Կատարողը Ծառայությունը մատուցում է իր միջոցներով և նյութերով:

1.2 Ծառայությունը կմատուցվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագրի կնքելու միջոցով: Ընդ որում Կատարողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Կատարողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում ընդ որում ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվում է: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարիների ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը կլուծարվի:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարներն, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը և վճարելու վճարման ենթակա գումարները:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել փոխհատուցել իրեն պատճառված վնասները և վճարելու սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժն, եթե Պատվիրատուն բազմիցս խախտել է ծառայության համար վճարման պայմանները:

2.4 Կատարողն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Ծառայությունների առնվազ յոթանասունհինգ տոկոսը մատուցել անձամբ:

2.4.6 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սկանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը Ծառայության մատուցման ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին կամ Ստացողին է ներկայացնում մատուցված Ծառայության (Ծառայության առանձին փուլի) մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.2.1 Պատվիրատուն (Ստացողը) հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայության արդյունքը չընդունելու պատճառաբանված մեթոդաչափ:

3.3 Պատվիրատուի (Ստացողի) կողմից Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու (հաստատելու) պահից:

4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 2-ում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 678 000 000 (վեց հարյուր յոթանասունութ միլիոն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում, վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 քանկային օրվա ընթացքում՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրով սահմանված վճարման ժամանակացույցով /Հավելված N 3/:

4.3 Սույն պայմանագրով Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման որակի, օգտագործված նյութերի որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.2 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայության արդյունքը չընդունվելու, ինչպես նաև սույն պայմանագրի N 1 հավելվածում եղված Տեխնիկական քննության օրինակի ժամանակացույցին չհամապատասխանող

Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի առավելագույն գնի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի չկատարված մասի գնի 0,05%-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ Պայմանագրի չկատարված մասի գնի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ՖՈՐՍՄԱԺՈՐ

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ցրտեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղթողակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում՝ համաձայնագրի կնքման պահից և գործում է մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը 31.10.2011թ. № ՊՆ 510-1354 գրությամբ նախապես համաձայնեցված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.3 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև

պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հարթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմանը Պատվիրատուի ստացածով:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N3 և N4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը::

7.9 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈՒ թիկունքի վարչությունը:


8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն
 ք. Երևան Բազրևանդի 5
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Կ 900011144079
 ՀՎՀՀ 00867415
 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
 ՆՏԱ դեպարտամենտի պետ

«Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկա» ՍՊԸ
 ք. Վանաձոր, Երևանյան խճ. 113/1
 «Էջ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
 Հ/Կ 217003135241801
 ՀՎՀՀ 06941817
 տնօրեն


 Լ. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ


 Գ. ՊԱՐԲԵՆՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՅՑԱԳԵՐ

Կտտոյում՝ ձմեռային դաշտային Չմեռային կտտոյանը բաղկացած է բաճկոնից և անդրավարտիքից: Բաճկոնի առաջամասի և հեռուամասին երկիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտտոյով երկհորմանի մզրակարված 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, քլեբերը՝ անջրաթափանց արհեստական կտտոյով երկհորմանի մզրակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառացուն մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտտոյից:

Բաճկոնի քիլոմետրամասը մշակված է վրակայրված կոկեոկայոյով: Չարքակարի լայնությունը 0,6 մ: Առաջամասերում գոտկատերից մերքև և բաճկոնի մերթին եզրից 5,5մ բարձրության վրա մշակված են վրադիր կոլային գրպանների կախույրներով՝ կողից և վերևից մուտքերով: Կախույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,6մ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 մ կտրի լայնությամբ: Կախույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 օղակ 15մ տրամագծով կոճակով: Կախույրի լայնությունը 5,5-6 մ, գրպանի լայնությունը 19,5-20 մ, երկարությունը՝ 21 մ: Գրպանների երեսամասը կտորի հակառակ կողմից (ներսից) մշակված է սև կամ մուգ կապույտ գույնի ֆիզե կամ համարժեք գործվածք: Աջ և ձախ քլեբերի ծավալում վրադիր գրպանների կենտրոնում կարվում են 7,5 մ տրամագծով կաշուն ժապավեններ: Կաշուն ժապավենները պետք է լինեն պաշտպանական գույնի կամ շագանակագույն: Բաճկոնը ունի ներկարված քլեբեր: Թևերի վրա մշակված են վրադիր, կախույրով ծավալում թեք գրպաններ, կախույրները կոճկվում են 1,5մ լայնությամբ կաշուն ժապավենով: Թևերի արմնկամասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով վրադիր արմնկակարներ: Թևերի բազուկային մասում մշակված են եզրաշերտերի միջով անցնող էլաստիկ ժապավենից ամրացրած պատաներ, որոնք կոճկվում են օղակով և 2հատ 15մ տրամագծով կոճակներով:

Բաճկոնը կոճկվում է շրթայով և 6 հատ 20մ տրամագծով կոճակօղակներով: Մշակված զարդոնի եզրաշերտի վրա: Եզրաշերտի վրա, վերևից 15 մ մերթև ամրացվում է կամրջակի միջով անցնող 4,5մ լայնությամբ պատա՝ կոյման ապրեթրամշանի համար, մերթևի ծայրը եզրաշերտին ամրացվում է կաշուն ժապավենով: Պատայի վերին եզրին հարկասար աջ և ձախ մասերում կրծքամասում, կրծքամշանները փակցնելու համար, կարվում են 13,0 x 2,5-3 մ չափերի կաշուն ժապավեններ:

Բաճկոնի և քլեբերի մերթևի եզրերը ծախված են և վրակարված: Ծախման լայնությունը սրատրատի վիճակում՝ 2սմ: Թևի մերթևի մասը մերթևի կողմից մշակված է 10 մ երկարությամբ էլաստիկ տրիկոտաժե մանժետով (թափակարով)՝ կողից բթամասի բացվածքով:

Բաճկոնը մերթևի կողմից գոտկատերի ուղղությամբ մշակվում է անջրաթափանց արհեստական գործվածքից բամապաշտպան շերտով՝ 18-20մ լայնությամբ: Այն եզրից մշակվում է 2-2,5 մ լայնությամբ էլաստիկ ժապավենով, որը առաջամասում կոճկվում է 15մ տրամագծով 3 կոճակ-օղակով:

Վզատողը մշակված է օձիքով: Օձիքը ունի կտրած կանգունակ: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ:

Բաճկոնին միացված է անջրաթափանց արհեստական գործվածքից գլխանոց:

Լանջափեշատակում մշակված է ծոցագրպան ստորճանակի համար: Գրպանի մերթևից ամրացվում էքող մետաղական բռնակով:

Բաճկոնի աստառի աջ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, սրը կոճկվում է մեկ օղակով և կոճակով:

Բաճկոնին կոճկվում է հանուլի մորթե օձիք, որը կոճկվում է 5 օղակներով և բաճկոնի օձիքին կարված 5 հատ 15մ տրամագծով կոճակներով:

Օձիքը կոճկվում է բաճկոնին, լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնին կարված 5 հատ 15մ տրամագծով կոճակներով: Օձիքի մորթու 1մ² մակերեսային խտությունը՝ 730 գրամ +/-50գ/ մ², խավի բարձրությունը՝ 12մմ ոչ պակաս, գույնը՝ մոխրագույն: Մորթե օձիքի վզատողի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով:

Անդրավարտիքը

Մշակված է գոտիով՝ զարդակարված շերտակյուն ձևով: Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով է: Կողքերից մշակված են կախույրով ծավալում եռանկյուն վրադիր գրպաններ: Կախույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, իսկ հետմասնային կոճկվում են գաղտնի կոճկվածքով 1 օղակ 15մ տրամագծով կոճակով: Գրպանի լայնությունը 20 մ, երկարությունը 24 մ, եռանկյուն, ծալքերի լայնությունը 5 մ, ծալքերը մերթևից 2 մ ամրակարված: Գրպանի վերնամասը (րեբանը) մշակված է 1 մ լայնությամբ զարդակարով:

Գտառ վրա տեղադրված են 5 կամրջակներ և գոտու չափը կարգավորող 2 ախլակներ, կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատերի հետմասնայի կտրի վրա: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 հատ 15մ տրամագծով կոճակով: Առաջամասում մշակված են ծնկակալեր: Անդրավարտիքը կոճկվում է գաղտնի

կոնկրետ, /գույքի կով/ 5 հատ 15մ տրամագծով օդակ կոնակներով, որից երկուսը գոտու վրա են: Անդրավարտիքը ներքնամասում կապվում է կապիչներով: Անդրավարտիքի ներդիրը մշակվում է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մզակարված է աստառացուի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա:

Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափա-հասակի: Բաճկոնի աստառացուի ձախակողմյան փեշի ներքին եզրից 15սմ բարձրության վրա կողակարին կարվում է արտադրանքի չափա-հասակի ստուգիչ պիտակ, որի վրա պետք է նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը:


Փաթեթավորումը՝ - Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային քափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի կողմից տրամադրվում է երեսացուի գործվածքը: Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կտորի ծախսի և մնացորդների վերաբերյալ: Շեղումները ըստ տեխնիկական պայմանի:

Չափա-հասակային սանդղակ.

| Կրծքավանդակի շրջագիծը | 44 | 46 | 48 | 50 | 52 | 54 | 56 | 58 | 60 | 62 | 64 | Ընդամենը % |
|-----------------------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|------------|
| Հասակը | | | | | | | | | | | | |
| 2 | 0.5 | 1.2 | 4 | 3 | 1 | | | | | | | 9.7 |
| 3 | 1 | 3.9 | 20 | 20 | 5.5 | 3 | 1 | | | | | 54.4 |
| 4 | 0.5 | 0.7 | 5 | 6 | 6.5 | 4 | 2 | 1 | 0.4 | 0.3 | 0.1 | 26.5 |
| 5 | | 0.2 | 0.7 | 0.8 | 1.5 | 1.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.1 | 0.1 | 6.4 |
| 6 | | | 0.3 | 0.2 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.3 | 0.1 | 0.1 | 3 |
| Ընդամենը % | 2 | 6 | 30 | 30 | 15 | 9 | 4 | 2 | 1.2 | 0.5 | 0.3 | 100 |

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ


«Արաբիան» ընկերության նախարարություն
 ք. Երևան Բազումյան 5
 «ՅՆ աշխարհակառույց» գործառնական վարչություն
 ՎՎ 900011144079
 ՎՎ 06067115
 «Արաբիան» ընկերության նախարարի տեղակալ
 ԼՍԱ հիմնադրամի մեջ:



Ա. ՄԻՐՉԱԲԵԿՅԱՆ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Վանաձորի «Գլոբիա» կարի ֆաբրիկա» ՍՊԸ
 ք. Վանաձոր, Երևանյան խճ. 113/1
 «ԷՅ-ԵՄ-ՔԻ-ՍԻ բանկ Հայաստան» ՓԲԸ
 ՎՎ 217003135
 ՎՎ 06911517



Կարի Գ. ԿԱՐԻՆՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ


| Ը/հ | Մասնագրության մատուցման անվանումը Դերձակի ծառայություն | Չ/մ | Ընդհանուր քանակը | Մեկ միավորի գին /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումար /ՀՀ դրամ/ | Մասնագրությունների մատուցումը | |
|-----------------|--|--|------------------|---------------------------|----------------------------|--|--|
| 1 | Կոստյում ձմեռային, դաշտային | հավաքածու | 8 000 | 16 950 | 135 600 000 | Մասնագրությունների մատուցումը կիրականացվի եամապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում | |
| 2 | Կոստյում ձմեռային, դաշտային | հավաքածու | 8 000 | 16 950 | 135 600 000 | | |
| 3 | Կոստյում ձմեռային, դաշտային | հավաքածու | 8 000 | 16 950 | 135 600 000 | | |
| 4 | Կոստյում ձմեռային, դաշտային | հավաքածու | 8 000 | 16 950 | 135 600 000 | | |
| 5 | Կոստյում ձմեռային, դաշտային | հավաքածու | 8 000 | 16 950 | 135 600 000 | | |
| Ընդամենը | | 678 000 000 (վեց հարյուր յոթանասունույթ միլիոն) ՀՀ դրամ | | | | | |

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Խ/հ | Գնման առարկան | Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների աուկայության դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացուցով |
|-----|----------------------|--|
| 1 | Դերձակի ծառայություն | 678 000 000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Կ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ



ՄԻՐԱԲԵԿՅԱՆ

ՎԱՏԱՐՈՂ

«Վանաձորի «Գորիա» կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Վանաձոր, Երևանյան խճ. 113/1
«Էջ-Ես-Բի-Սի քանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Կ 217003135241001
ՀՎՀՀ 06941817
տնօրեն

ԳՎԱՐԻՆՅԱՆ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Կատարող

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« _____ » « _____ » 20__ թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « _____ » « _____ » 20__ թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողն՝ ի դեմս _____,

հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20__ թ-ից _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Ծառայություններ ի մատուցման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|--------------------------|------------------------------------|-------------------------------------|-------------------------------------|--------------------------------------|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ թուր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը մատուցեց

Ծառայությունը ընդունեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.